«Թիմ Ռեսուրս» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, Ք. Գյումրի, Շիրակացի 56
Հեռ.՝ (+374) 98 03 18 89
Էլ. հասցե՝ teamresourcengo@gmail.com
regionnewsplus@gmail.com

"Team Resource" NGO
Address: RA, Gyumri ,Shirakatsi 56
Cell: (+374) 98 03 18 89
Email: teamresourcengo@gmail.com
regionnewsplus@gmail.com

ՀՀ Կառավարություն
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին

/ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1/

Regionstv.am կայքի խմբագիր Էդուարդ Մխիթարյանից

/ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 56 /

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան.

Regions TV-ն վերլուծական տեսանյութ է պատրաստում վերջերս Վանաձորում 2 անչափահաս քույրերի կյանքը խլած դժբախտ պատահարի պատճառների վերաբերյալ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունը.

1. Հունիսի 15-ին Փամբակ գետում 2 անչափահաս քույրերի մահվան ելքով դժբախտ պատահարից հետո հանրության շրջանում ակտիվորեն քննարկվում է պատկան մարմինների պատասխանատվության հարցը: Քաղաքացիներին հետաքրքրում է այն հարցը, թե ի՞նչ պատասխանատվություն է կրում Վանաձորի համայնքապետարանը՝ հաշվի առնելով, որ այդ վտանգավոր խողովակը շուրջ 40 տարի ծառայել է որպես անցում, մի քանի դժբախտ պատահարի պատճառ է դարձել և ժամանակին չի ապամոնտաժվել:

2. Կոնկրետ ո՞ր կառույցը և ո՞ր պաշտոնատար անձինք են պատասխանատու Փամբակ գետի վրա առկա վտանգավոր կառույցների և անցումների հաշվառման, տեխնիկական վիճակի վերահսկման, անվտանգության ապահովման կամ անհրաժեշտության դեպքում դրանց ապամոնտաժման համար:

3. Ձեր աշխատակազմի համապատասխան վարչության կողմից Փամբակ գետի վրա առկա անցումների և նմանատիպ կառույցների ուսումնասիրություն կամ տեխնիկական գնահատում իրականացվե՞լ է: Եթե այո, ի՞նչ արդյունքներ են արձանագրվել, հայտնաբերվե՞լ են արդյոք անվտանգության ռիսկեր, և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ ուղարկելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ regionnewsplus@gmail.com

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Էդուարդ Մխիթարյան

09.07.2026